

ԾՐԱԳՐԵՐ


1. Ջրագծի վերանորոգում - 2013թ. ընթացքում գյուղում վերանորոգվել է 3 կմ ջրագիծ, որի շնորհիվ բարելավվել է խմելաջրի որակը: Եթե նախկինում տնային տնտեսուհիները ջուրը բերում էին դույլերով դրսից, ապա այժմ բոլոր տներում կա հոսող ջուր, որը թեթևացնում է կանանց աշխատանքը:
2. Աղբահանության կազմակերպում – Կազմակերպվել է համայնքի կանանց խնդրանքով: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքի կանանց 80%-ը: Այս ծրագրի շնորհիվ թեթևացել է կանանց աշխատանքը և գյուղը ավելի մաքուր ու գեղեցիկ է:
3. Համայնքային կենտրոնում տրամադրվել է տարածք թեմիսի, շախմատի և նարդի խաղալու համար: Քանի որ երեխաները իրենց ազատ ժամանակը անցկացնում են տներում, զբաղմունք չունեն, այժմ կարող են իրենց ժամանակը անցկացնել համայնքային կենտրոնում, խաղալ՝ թեմիս, շախմատ և նարդի:
4. Գյուղում կատարվել է գիշերային լուսավորության ծրագիր- Որի շնորհիվ կանայք երեկոները իրենց հանգիստը կարող են անցկացնել զբոսայգում:
5. Կազմակերպվել է կլոր սեղան՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենքի» իրազեկման նպատակով: Մասնակցել է 12 կին, 7 տղամարդ:
6. Կազմակերպվել է հանդիպում՝ «Ընտանեկան բռնություն թեմայով»:
Մասնակցել է 21 կին, 13 տղամարդ:
7. Կազմակերպվել է առողջապահական դասընթացներ երեք անգամ: Դասընթացները վարել են Թալինի հիվանդանոցի բժիշկները: Մասնակցել են գյուղի 25 երիտասարդ մայրեր:
8. Մաքրվել է գյուղամիջյան առուները ձմռան ընթացքում կուտակված աղբից, որպեսզի չառաջանան խցանումներ, աղբը և սելավաջրերը չլցվեն տները:

Գյուղամիջյան առուների մի հատվածում կատարվել է խողովակների տեղադրում:
Որի շնորհիվ աշնան տերևաթափի ժամանակ տերևները չեն լցվի առուները և
առաջացնի խցանումներ, ջուրը չի հոսի ասֆալտապատ ճանապարհով և կանանց
փողոցային մաքրությունը ավելի կթեթևանա:

9. Կազմակերպվել է գյուղապետարանի կողմից ամանօրյա միջոցառում՝ ձմեռ պապի
և ծյունանուշի մասնակցությամբ, որին մասնակցել են համայնքի 80% կանայք և
երեխաներ:

10. Աշխատանքներ են կատարվում համայնքում «Վորլդ - Վիժն» մանկական բարեգոր-
ծական կազմակերպության միջոցով մանկապարտեզ հիմնելու համար: Երկուսն
երեխաներ կընդգրկվեն մանկապարտեզում, որի շնորհիվ մայրերը ապահով կլինեն
իրենց երեխաների համար և կունենան հանգստի ժամանակ:

Իրինդի գյուղ
Աշխ. քարտեզ



Բ. Բերոյան
Ս. Պետրոսյան